ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 , darpas.lori@mta.gov.am

N 108
19 ապրիլ 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ եմ ներկայացնում Դարպաս համայնքի ավագանու թիվ 7-11 որոշումները:

Առդիր՝ 2 ֆայլ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Արմեն Ալոյան**

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ն. Ալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 7

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով.
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դարպաս համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 12-ի նիստի օրակարգը:
1.Դարպաս համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 12-ի նիտի օրակարգը հաստատելու մասին:
2.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
3.Դարպաս համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը պայմանները և իրականացման կարգը սահմանելու մասին:
4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Դարպաս համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5.Դարպաս համայնքի 2018 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն հաղորդելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 8

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 03-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների , զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի ավագանու
2018 թվականի ապրիլի 12-ի N 8 որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Ավետիսյան Արտակ Սամվելի - 10000 (տաս հազար) / երեխայի ծննդյան գումար /

2.Մարուքյան Վահե Վիկտորի - 10000 (տաս հազար) / երեխայի ծննդյան գումար /

3.Ավետյան Ռոմիկ Ռուբենի - 15000(տասնհինգ հազար) / հարազատի հուղարկավորության գումար /

4.Միքայելյան Ալիսա Ամասիկի - 15000(տասնհինգ հազար) / հարազատի հուղարկավորության գումար /

5.Դոդոյան Արամայիս Հայկազի - 15000(տասնհինգ հազար) / հարազատի հուղարկավորության գումար /

6.Դոդոյան Շողիկ Մարատի – 50000 (հիթսուն հազար) /սոց.օգնություն /

7.Կիրակոսյան Արմենուհի Պետրոսի – 50000 (հիթսուն հազար) /սոց.օգնություն /

8.Վարդանյան Պարույր Պատվականի – 50000 (հիթսուն հազար) /սոց.օգնություն /

9. Մնացականյան Սուսաննա Վահանի- 50000 (հիթսուն հազար) սոց.օգնություն/

10.Աբրահամյան Օսաննա Հովհաննեսի -50000 (հիթսուն հազար) /սոց.օգնություն/

11.Ավետյան Լարիսա Կոստնի – 50000 (հիթսուն հազար) /սոց.օգնություն /

Ընդամենը՝ 365000 (երեք հարյուր վաթսուն հինգ հազար) դրամ:

Դարպաս համայնքի ղեկավար՝ Արմեն Ալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 9-Ն

ԴԱՀՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ,ԾԱՎԱԼԸ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետով
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնքի վարչական սահմաններում գտնվող ամշարժ գույքի սեփականտիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը,ծավալը,պայմանները և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 10-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի «ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով
Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

1.Դարպաս համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Դարպաս համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 30-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝համաձայն կից թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

	Կողմ -4	Դեմ -0	Ձեռնպահ -0
1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ			
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ			
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ			
4. ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 11

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին կետով, Դարպաս համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Դարպաս համայնքի ղեկավարի 2018 թ-ի 1-ին եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հաղորդումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՒԲԱ
2. ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԻԿ
4. ԴՈԴՈՌՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**